DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ
Archbishop Khajag Barsamian, Primate

Թիւ 2424
Օգոստոս 7, 1996

Սիրելի հայրենի մարզիկներ,

Ուրախութեամբ կը տեղեկանանք թէ Հայաստանի Հանրապետութեան անունով կը բերէք ձեր մասնակցութիւնը հաշմանդամներու յատուկ ողիմպիական խաղերուն՝ որոնք տեղի պիտի ունենան Աթլանթա քաղաքին մէջ։

Մեր օրհնութիւնն ու բարեմաղթութիւնները ձեզի հետ թող ըլլան՝ որպէսզի դուք մրցակցութեան ազնիւ ոգի ցուցաբերելով նուաճէք յաղթանակներ։

Ձեր արձանագրած յաջողութիւնները հպարտութեամբ պիտի ոգեւորեն համայն աշխարհի ձեր արենակիցները, որոնք պիտի հետաքրքրութեամբ հետեւին ձեր մրցանքներուն։

Մեծապէս կը գնահատենք ձեր ցուցաբերած օրինակելի վճռակամութիւնն ու յարատեւութիւնը։

Թող Տէրը յաջողութեամբ պսակէ իւրաքանչիւրիդ ջանքերը եւ պատուաբեր մետալներու արժանացնէ ձեզ։

Սիրոյ ողջունիւ

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, NY 10016-4885 TELEPHONE 212.686.0710 FAX 212.779.3 58